



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtychyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Օսիպյան Լիլիանա

ԵՊՀ, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, մագիստրանտ
Գիտական ղեկավար՝ Ս. Գրիգորյան
Էլ. փոստ՝ lilianaosipyan@mail.ru

ՀԱՅ ԿԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՎԵՐՔԱԼ ԵՎ ՈՉ ՎԵՐՔԱԼ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ

Ցանկացած ոլորտում կարևոր են տվյալ բնագավառի գիտելիքների իմացությունը, քանի որ միայն այդ կերպ կարելի է լիարժեք ինքնադրսևորվել համապատասխան դաշտում:

Ժամանակակից աշխարհում հասարակական բոլոր ոլորտներում (ներառյալ քաղաքականությունը) ստեղծվում են տարատեսակ հնարքներ՝ ապահովելով արդյունավետություն և առաջընթաց: Սույն աշխատանքի հիմքում դրվել է քաղաքական դաշտում կարևորագույն դեր ու նշանակություն ունեցող PR-ի ուսումնասիրությունը, որի կարևոր բաղկացուցիչ են համարվում վերբալ (խոսքային) և ոչ վերբալ (ժեստեր, միմիկաներ) հաղորդակցության ձևերը: Կա տեսակետ, ըստ որի՝ ավելի լավ է ձևավորել հասարակական կարծիք, քան ազդել դրա վրա: Բայցևայնպես, ողջամտորեն կազմված PR ծրագրերը ևս ունակ են որոշակիորեն փոխելու հասարակական կարծիքը: Մարդն իր զգացմունքներն արտահայտում է ոչ միայն խոսքով, այլև ժեստերով, միմիկաներով, հայացքով, արտաքին տեսքով, շփման ժամանակ զբաղեցրած հեռավորությամբ: Ապացուցված է, որ մարդու մասին տեղեկատվության 80 %-ը ստանում ենք ոչ վերբալ միջոցներով և միայն 20 %-ը՝ բառերով: Մարդիկ հաճախ չեն գիտակցում այն փաստը, որ նրանց ժեստերը, ասածներն ու շարժումները հակասում են միմյանց: Այդ ամենը նկատելի է հատկապես քաղաքական դաշտում, որտեղ քաղաքական գործիչների հետ իմիջմեյքերների հսկայական խումբ է աշխատում: Հարկ է նշել, որ այդ մեթոդներից շատերն ուղղակիորեն փոխկապակցված չեն մերօրյա իրականությանը, ինչն էլ անհրաժեշտություն է առաջացնում ստեղծելու նոր ռազմավարություններ և խստորեն հետևելու դրանց. այսպես վարվում են մերօրյա քաղաքական գործիչներից շատերը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ կին քաղաքական գործիչների վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման համապատասխանելիությունը, իմիջն ու վարքը: Ենթադրվում է, որ վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման համապատասխանելիությունը բարձրացնում է տվյալ քաղաքական գործչի վարկանիշը՝ մեծ հավատ ներշնչելով վերջինիս ծավալած գործունեության հանդեպ:

Հաղորդակցությունը լինում է երկու տեսակի՝ վերբալ (խոսքային) և ոչ վերբալ (ոչ խոսքային): Ոչ վերբալ հաղորդակցումն անվանվում է նաև ժեստերի կամ մարմնի լեզու (body language), այլ կերպ ասած՝ կինետիկա, երբ խոսքի փոխարեն կամ դրան

զուգընթաց կիրառվում են մարմնի շարժումները: Գիտականորեն ապացուցված է, որ առանց մարմնի լեզվի պարզապես անհնար է հասնել կատարյալ փոխըմբռնման: Այն մարդկային հաղորդակցության անքակտելի բաղադրիչն է՝ գրված և չգրված օրենքներով, էթնոհոգեբանական առանձնահատկություններով ու գաղտնիքներով [1]:

Նշենք, որ քաղաքական գործիչներին, հատկապես՝ կառավարության ղեկավարներին, քաղաքական տեխնոլոգները սովորեցնում են ոչ վերբալ շփումների այնպիսի ձևեր, որոնց օգնությամբ նրանք հասարակության աչքին առավել մարդասեր, ազնիվ, հոգատար, համեստ և ճշմարտախոս ես երևում: Թե ում և որքանով է դա հաջողվում՝ այլ հարց է: Հայաստանում կեսդարյա ուշացումով բուռն հետաքրքրություն է նկատվում մարմնի լեզուն յուրացնելու հարցում: Այսօր հաղորդակցության այդ ձևն թռիչքային զարգացում է ապրում: Լավ իմանալ մարմնի լեզուն՝ նշանակում է լավ հասկանալ դիմացինին, լինել հանգիստ և ինքնավստահ, զգալ, թե ում կարելի է վստահել, իսկ ում՝ ոչ, ում հետ շարունակել կամ ընդհատել կապերը:

Քննության առնելով հայ կին քաղաքական գործիչների գործունեությունը՝ սույն աշխատանքի մաս են կազմել այն կանայք, ովքեր աչքի են ընկել իրենց ժեստերով. մասնավորապես՝ անդրադարձել ենք Արփինե Հովհաննիսյանին, Զարուհի Փոստանջյանին, Շուշան Պետրոսյանին և Հրանուշ Հակոբյանին՝ վերլուծելով նրանց վերբալ, ոչ վերբալ (կինետիկ) և հաբիտար (հագուկապ) իմիջները: Ընտրանքը պայմանավորված է քաղաքական գործիչների տեսակների տարբերությամբ: Հարկ է նշել, որ վերլուծության համար հիմք ենք ընդունել ոչ միայն երկարատև ուսումնասիրություններն ու տվյալ քաղաքական գործչի վարած քաղաքականությունն իր բոլոր կողմերով, այլև կիրառել ենք հարցման մեթոդը՝ համադրելով մեր տեսակետը հասարակության կարծիքի և ստացած տպավորությունների հետ: Հարցումներն ընդգրկել են Երևանում ապրող 18-25, 26-40 և 41-ից բարձր տարիք ունեցող արական և իգական սեռի 200 անձանց կարծիքները:

Արփինե Հովհաննիսյան. ՀՀ պետական և քաղաքական գործիչ, իրավաբան, ԱԺ նախագահի տեղակալ: Անդրադառնալով քաղաքական գործչին՝ հարկ է նշել, որ ոմանց համար բաց և ինքնավստահ, ոմանց համար էլ արհեստավարժորեն իրեն քողարկող այս գործիչը ևս շատերի պես իրեն «մատնում» է ոչ վերբալ ազդակների միջոցով: Քննության առնելով գործչի հարցազրույցները, մամուլի ասուլիսները, ելույթները, փորձենք վերլուծել վերջինիս քաղաքական գործունեությունը՝ առավելապես հիմնվելով արտահայտած մտքերի և ժեստերի համապատասխանության վրա:

Ուսումնասիրելով Արփինե Հովհաննիսյանի ելույթները՝ փորձենք առանձնացնել բնորոշ ժեստերը՝ տալով բացատրություններ: Ամենից հաճախ օգտագործվող ժեստերից է խոսելու ընթացքում ակնոցը պարբերական շտկումը, ինչը ազդակ է՝ «ես հետևում եմ ձեզ, ես շատ ուշադիր եմ» [2]: Նման ժեստերից կարող ենք առանձնացնել նաև պարբերաբար բարձրախոսի ուղղումը, ինչը, ըստ հոգեբանների, ենթագիտակցական ազդակ է, որ ուշադրություն դարձնեն այն ամենին, ինչ նա ասում է. խոսքը լսարանին հասցնելու ձգտում ունի [2]: Իր գրեթե բոլոր ելույթներում խոսում է ձեռքերն

ամբիոնին դրած, ինչը նշանակում է, որ իրավիճակի տերն է և կանի այն, ինչ ասում է [3]:

Խոսելու ընթացքում քաղաքական գործիչը հաջորդաբար իր հայացքն ուղղում է խմբի բոլոր մասնակիցներին, որ ոչ ոք ուշադրության պակաս չզգա: Տեսողական շփումը թույլ է տալիս զգալ յուրաքանչյուր մարդու, նկատել արտահայտած խոսքերի հանդեպ լսարանի արձագանքը: Հայացքով սահուն անցում կատարելով մի մարդուց մյուսին՝ ամբողջ խումբն ակամայից հայտնվում է նրա հսկողության տակ. յուրաքանչյուր անդամ զգում է, որ ելույթ ունեցողը խոսում է հենց իր համար: Սա շատ հոգեբանական կակոր հնար է, որին փայլուն տիրապետում է Արփինե Հովհաննիսյանը:

Այս քաղաքական գործչի պարագայում միշտ նկատվում է նաև գրիչը ձեռքին ելույթ ունենալու միտումը, որն ենթադրում է կոնկրետություն, կարգապահություն, ներքին կարգուկանոն [3]: Երբեմն նկատվում է նաև մատանով խաղալու ժեստը. այն մանրուքների վրա կենտրոնանալու նշան է: Հակառակ հասարակության մեջ տարածված կարծիքին, թե նա քաղաքական ինքնավստահ այն եզակի գործիչներից է, ում խոսքը սահուն է և հստակ ձևակերպված, իրականում դա ոչ թե ինքնավստահության, այլ մասնագիտական գիտելիքները հմտորեն կիրառելու արդյունք է: Ելույթների ժամանակ Հովհաննիսյանին ուղղված ցանկացած հարցադրում ավարտվում է լրացումներով, ինչը փաստում է հենց վերը նշված ուշադրության մասին: Հովհաննիսյանի խոսքում գերակշռում են մասնագիտական եզրույթները, ինչը երկու բան կարող է նշանակել՝ մասնագիտության որակների լիարժեք դրսևորում և տեսակի մասին լրջության և վստահության ստեղծում: Մշտապես խոսքը համեմում է վերաբերականներով, ընդ որում՝ թե՛ ելույթների, թե՛ հարցազրույցների ժամանակ: Դա է պատճառը, որ նրա մոտ գերակշռում է խաչված մատների ժեստը, ինչը, ըստ գրականության, ինչ-որ բան թաքցնելու նշան է [2]:

Առհասարակ, հայկական իրականությանում, առավել ևս՝ քաղաքականության մեջ, բացակայում է լսելու արվեստը: Նույնը չենք կարող պնդել Հովհաննիսյանի դեպքում, ով ոչ միայն լուռ լսում է հարցը, այլև բարեհամբույր ու համբերատար վերաբերմունք է ցուցաբերում. Սա նշանակում է, որ նա մեծ ուշադրություն է դարձնում նաև էթիկայի կանոններին:

Անդրադառնալով Արփինե Հովհաննիսյանի հաբիտար իմիջին՝ կարող ենք միանշանակ ասել, որ նա քաղաքական սակավաթիվ այն կին գործիչներից է, ով միշտ խնամված տեսք ունի և հետևում է իր հագուկապին: Ակնհայտ է, որ Ա. Հովհաննիսյանը գունային բազմազանության սիրահար է, նախընտրում է կրել դասական, վառ գույնի կոստյումներ՝ մեծամասամբ համադրելով սպիտակ վերնաշապիկների հետ: Գործնական հանդիպումներին և բոլոր ելույթներին մշտապես ներկայանում է բարձրակրունկ, իսկ առօրյայում, ինչպես ինքն է նշում, ցածրակրունկ կոշիկներով, թեպետ բարձրակրունկները գերակշռում են: Կարելի է ասել, որ Արփինե Հովհաննիսյանը տաբատների սիրահար չէ, որովհետև նրան շատ հաճախ կարելի է տեսնել նեղ կիսաշրջագգեստներով, որոնք ամբողջովին ընդգծում են կազմվածքը: Ինչ վերա-

բերում է գույների բազմազանությանը, ապա վերջինիս նախապատվություն տալիս են համարձակ մարդիկ:

Այս քաղաքական գործիչը սիրում է նաև զարդեր կրել, մասնավորապես՝ վզնոցներ, որոնք գուցե միջին չափի են, բայց միանգամից աչքի են ընկնում՝ շնորհիվ վառ գույների: Այս ամենը նորից խոսում է նրա համարձակ և ինքնավստահ կերպարի մասին: Կարող ենք եզրակացնել, որ նա ուշադրություն չի դարձնում, թե ինչ են խոսում իր արտաքին տեսքի մասին. կարևորն իրեն վստահ և գեղեցիկ զգա: Մյուս կողմից՝ թեպետ մշում է, թե երբեք չի հետևում նորաձևության միտումներին, բայց ևս այնպես, իրականությունը բոլորովին այլ բան է փաստում:

Հաջորդ քաղաքական գործիչը, ում անդրադարձել ենք, **Ջարուհի Փոստանջյանն է՝** հայ քաղաքական գործիչ, «Ժառանգություն» կուսակցության նախկին անդամ, այժմ «Երկիր Ծիրանի» կուսակցության հիմնադիր, 5-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր: Ուսումնասիրելով Ազգային ժողովի քաղաքական ամենատիվ կին գործչին՝ եզրակացրինք, որ չնայած հասարակության մեջ աչքի ընկնող պահվածքին, համարձակ և էմոցիոնալ կերպարին՝ Ջարուհի Փոստանջյանը նույնքան «առատաձեռն» չէ ժեստերում: Ազգային ժողովի ելույթների ժամանակ անընդհատ նայում է շուրջը, ինչը նշանակում է, որ հետաքրքրվում է իր մասին կարծիքներով, փորձում է նման կերպ հասկանալ, թե ովքեր են հետաքրքրվում իր խոսքով և գործունեությամբ [2]: Խոսքը հիմնականում անկայուն է, վստահություն չի ներշնչում, թերհավատություն կա: Շատերին նյարդայնացնող ձայն ու առոգանություն ունի (կարծիքներին հանգել ենք հարցման ընթացքում): Կա կարծիք, որ մեծ լսարանի համար ելույթ ունենալիս պետք է միշտ բարձր խոսել, բայց իրականում միշտ չէ, որ պետք է ձգտել բարձր ձայնով ելույթի, քանի որ այն շուտ է հոգնեցնում լսարանին: Պետք է պարզապես հստակ խոսել՝ կարևոր մտքերից առաջ վերցնելով դադարներ՝ միտքն ըմբռնելի դարձնելու համար: Պատրաստվելով հանրության առջև ելույթին, քաղաքական գործիչը պետք է հաշվի առնի ամենակարևոր կանոնը՝ իր կերպարում ոչ մի նյարդայնացնող բան չպետք է լինի ելույթի ժամանակ՝ հագուկապից, կեցվածքից մինչև ձայնի առոգանություն: Ակնհայտ է, որ այս քաղաքական գործիչը պետք է լրջագույնս աշխատի ինքնաներկայացման հմտություններին տիրապետելու համար, քանի որ հասարակությունն է ստեղծում և փշրում բոլոր այն նորմերը, որոնք անհրաժեշտ են գործչին հաջող գործունեության համար:

Փոստանջյանը հաճախ է կիրառում բաց ձեռքերի ժեստը՝ ասիլ դեպի վեր: Այսպիսով լսարանից ակնկալում է աջակցություն և խրախուսում՝ ցույց տալիս տվյալ պահին անկեղծությունն ու ամեն ինչ ասելու պատրաստակամությունը: Ձեռքին հաճախ պահում է գրիչ կամ մատիտ, որը լսարանին ինչ-որ բան բացատրելու ժեստ է. այսինքն՝ ունի լսարանը վերահսկելու, իշխելու ենթագիտակցական ցանկություն [3]: Հաճախ նկատելի է նաև ձեռքերի փակված դիրք և մատների խաչվածություն, որը շրջապատից ինչ-որ բան թաքցնելու, մինչև վերջ չբացվելու նշան է [2]:

Փոստանջյանն ակտիվորեն մասնակցում է նաև լրագրողների հետ հանդիպումներին՝ ցուցաբերելով հարցերին պատասխանելու պատրաստակամություն: Դիտելով մի շարք ասուլիսներ, նկատեցինք, որ նա միշտ հարցին պատասխանելիս աչքերն ուղղում է աջ. սա փաստում է, որ նա վիզուալ հիշողություն ունի: Հոգեբաններն առանձնացնում են մարդու ընկալման երեք տեսակ՝ վիզուալ (տեսողական), ատդիալ (լսողական) և կինետիկ (զգայական): Վիզուալներն առաջնորդվում են՝ հավատարիմ մնալով միայն այն ամենին, ինչ տեսել են [2]:

Ուսումնասիրելով Ջարուիի Փոստանջյանի հաբիտար իմիջը՝ կարող ենք ասել, որ Արփինե Հովհաննիսյանի նման շատ է կրում վառ գույնի կոստյումներ. սա գործչի աշխուժության և ակտիվության մասին է վկայում: Հարցազրույցներից մեկում Փոստանջյանն ասել է, թե իր համար ամենադժվար գործն արտաքին տեսքի պատշաճ ապահովումն է՝ ավելացնելով, որ կինը միշտ պետք է լավ տեսք ունենա: Բայցևայնպես, չնայած ներկայանալի տեսք ունենալու մեծ ցանկությանը, Փոստանջյանը հաճախ ուշադրություն չի դարձնում արտաքին տեսքին: 2. Փոստանջյանը նախընտրում է նաև սև և սպիտակ գույները (գերակշռողն են հատկապես վերջինիս առօրյայում): Գրեթե երբեք արտահայտիչ շպարով հանդես չի գալիս և ի տարբերություն Արփինե Հովհաննիսյանի՝ զգեստապահարանում զգալի տեղ են զբաղեցնում ցածրակրունկները:

Հաջորդ քաղաքական գործիչը, ում անդրադարձել ենք, **Հրանուշ Հակոբյանն է՝** ՀՀ սփյուռքի նախկին նախարարը: Ուսումնասիրելով Հակոբյանի ելույթները, հարցազրույցներն ու ասուլիսները՝ փորձենք ներկայացնել նրա կիրառած ժեստերի վերլուծությունը՝ զուգահեռաբար անդրադառնալով ոչ միայն կինետիկ, այլև հաբիտար իմիջին:

Ինչպես վերոնշյալ քաղաքական գործիչներին, Հրանուշ Հակոբյանին ևս, ելույթ ունենալիս բնորոշ է ձեռքերն ամբիոնին դնելու և ափերը լայնորեն բացելու ժեստերը. սրանք իշխելու, ամեն ինչ ձեռքում պահելու և կառավարելու ցանկության ատրիբուտներ են [3]: Առանձնացնենք նաև բարձրախոսին պարբերաբար դիպչելու ժեստը, ինչը խոսքը լսելի դարձնելու ցանկություն մասին է վկայում, այլ կերպ ասած՝ վախենում է, որ խոսքը լսարանին չի հասնի: Նույնը նկատում ենք նաև Արփինե Հովհաննիսյանի մոտ [2]: Դրա հետ մեկտեղ պիտի նշենք նաև հայացքն այս ու այն կողմ ուղղելու հանգամանքը, ինչը նորից լսարանից ուշադրության պահանջելու մասին է խոսում: Բացի այդ, խոսքի մշտական փնտրտուք ունի և գտնվում է անհանգիստ վիճակում: Նախարարն աչքի է ընկնում նաև մատների խաչվածությամբ, ինչը նշանակում է փակվածություն: Ձեռքերն իրար մեջ դնելու ժեստը ևս փակվածություն նշան է, ուստի, կարող ենք ասել, որ Հրանուշ Հակոբյանը տեսակով փակ անձնավորություն է:

Հրանուշ Հակոբյանի հաբիտար իմիջին անդրադառնալով՝ պիտի նշենք, որ նախարարը միշտ հանդես է գալիս դասական ոճով, իր տարիքին համապատասխան: Հագուստում հիմնականում գերակշռում են դասական սև, սպիտակ և կարմիր գույները: Նախարարին գործնական կամ առօրյա հանդիպումներին գրեթե անհնար է տեսնել

տաբատով կամ ազատ հագուստով, միշտ ունի ներկայանալի տեսք, չնայած, որ նորամուծությունների սիրահար չէ: Հիմնականում հանրությանը ներկայանում է բարձրակրունկներով, ինչն, ըստ հոգեբանների, կարևոր ատրիբուտ է կնոջ քայլվածքի ձևավորման համար, քանի որ հենց դրանք են նրան կանացիություն հաղորդում: Կարելի է հետևություն անել, որ քաղաքական գործիչ Հրանուշ Հակոբյանն ամեն ինչ անում է կանացի կերպարում մնալու և իր քիչ թե շատ «առնականության» կարծրատիպը կոտրելու համար: Քաղաքական գործիչը համեստ է նաև շպարի հարցում, չի սիրում աչքի ընկնող զարդեր: Նրան միշտ կարելի է տեսնել ժամացույցով, ինչը նշանակում է, որ ճշտապահ է, հետևողական և գնահատում է ժամանակը: Բոլոր զարդերը (հիմնականում մատանիները) ձախ ձեռքին են, ինչը թույլ է տալիս պնդելու, որ պճնամոլ չէ և ձևական ոչինչ չի անում արտաքին տեսքի համար, քանի որ, ըստ հոգեբանների, մարդն իր անկեղծ ժեստերն արտահայտում է մարմնի ձախ հատվածով [2]: Կարելի է հանդիպել միջին կամ փոքր ականջողերով: Շատ է կրում մարգարիտներ, որոնք կանացիության խորհրդանիշ են: Հրանուշ Հակոբյանի հաբիտար իմիջի այցեքարտն են դարձել կրծքազարդերը, որոնք միշտ կրում է հագուկապին համապատասխան:

Քաղաքական հաջորդ գործիչը, ում անդրադարձել ենք, ՀՀ վաստակավոր արտիստ, Ազգային ժողովի պատգամավոր **Շուշան Պետրոսյանն** է: Շուշան Պետրոսյանին ելույթ ունենալիս հիմնականում կարելի է տեսնել ամբիոնին աջ ձեռքը հենած դիրքով, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ նա ստեղծում է իմիջ, քանի որ ըստ գրականության՝ մարմնի միայն ձախ հատվածն է ցույց տալիս իրական հույզերը, իսկ աջն արտահայտում է այն, ինչը մարդն է ցանկանում ի ցույց դնել:

Աժ ելույթների ժամանակ խոսքը ոչ հստակ ձևակերպումներ է ստանում, ինչը կա՛մ ոլորտին բավարար չտիրապետելու, կա՛մ աղքատ բառապաշար ունենալու մասին է խոսում: Մշտապես քարոզում է հայեցի խոսք, բայց իր օրինակով ձեռնպահ է մնում դրանից [4]:

Հաճախ Շուշան Պետրոսյանին կարելի է հանդիպել ուները վեր բարձրացրած դիրքով: Այս ժեստը լարվածություն, սուտ, անելանելիություն, կասկածամտություն, սեփական ասածին չհավատալու նշան է, իսկ խաչված ձեռքերն էլ խոսում են ինչ-որ բանից պաշտպանվելու, մեկուսանալու կամ սուտը քողարկելու մասին [3]: Հաճախ կարելի է հանդիպել ելույթների, որոնց ընթացքում աչքերը ձախ կողմ է ուղղում, ինչը դարձյալ ստի նախադեպ է:

Շուշան Պետրոսյանն աչքի է ընկնում հոնքերը վեր բարձրացնելու ժեստով, ինչը զարմանք է ենթադրում: Այս քաղաքական գործչին հաճախ կարելի է հանդիպել ձեռքը ծնոտին դրված դիրքով, ինչը նշանակում է, որ ձանձրանում է:

Շուշան Պետրոսյանի հաբիտար իմիջին անդրադառնալով՝ պիտի նշենք, որ ի տարբերություն քաղաքական մյուս գործիչների, ովքեր քիչ թե շատ հետևում են նորաձևության միտումներին՝ փորձելով իրենց պաշտոնին հարիր, պատշաճ ու դասական տեսք ունենալ, Պետրոսյանը կրում է այն, ինչն իրեն հարմար է՝ նախապատ-

վությունը հիմնականում տալով ազատ և հանգիստ հագուստին: Հոգեբանները գտնում են, որ սպորտային հագուստ կրելը լավագույն և հեշտ միջոցն է ինքնավստահ և հաջողակ մարդու տպավորություն թողնելու համար: Չնայած հաճախ ենք իր կերպարի մեջ տեսնում սև գույնի դետալներ, ամեն դեպքում, պիտի նշել, որ սա գույնի նախասիրություն է, այլ ոչ թե արտաքին տեսքի թերությունները քողարկելու միջոց, քանի որ հաճախ կարելի է Շուշան Պետրոսյանին հանդիպել վառ գույների հագուստով: Վերջինս նաև կապույտի և այս գույնի երանգների սիրահար է: Կապույտն, ի դեպ, սոլիդության, դասականության և պաշտոնական իմիջի լավագույն երանգն է համարվում [2]:

Շուշան Պետրոսյանն աչքի է ընկնում մեծ և չափից շատ զարդերով: Սիրում է նաև կերպարն ընդգծող, տարբեր երանգների շարՖեր և գլխաշորեր: Կրում է ժամացույցներ, սիրում է կախովի ականջօղեր: Շպարի հարցում զուսպ է. առօրյայում նախընտրում է հասարակ դիմահարդարում և ոչնչով աչքի չի ընկնում: Հարցազրույցների ու ելույթների ժամանակ հազվադեպ կարելի է տեսնել կարմիր շրթներկով, որով փորձում է ընդգծել իր ինքնավստահ կերպարը:

Նրան հիմնականում տեսնում ենք ցածրակրունկ, հազվադեպ՝ բարձրակրունկ կոշիկներով: Հիմնականում հագնում է կա՛մ երկար զգեստ, կա՛մ համադրում է տաբատն ու վերնաշապիկը:

Այսպիսով, ըստ մեր անցկացրած հարցման արդյունքների՝ մարդիկ վերոնշյալ չորս կին գործիչներից ազդեցիկ են համարում Արփինե Հովհաննիսյանի վարած քաղաքական գործունեությունը՝ 41.7 %, երկրորդ տեղում է Զարուհի Փոստանջյանը՝ 35.8 %, Հրանուշ Հակոբյանը՝ 5.9 %, Շուշան Պետրոսյանը՝ 1.1 %: 15.5 %-ն էլ կարծում է, ոչ ոք ազդեցիկ չէ:

Անդրադառնալով գործիչների իմիջին՝ նշենք, որ մարդկանց զգալի մասը՝ 80 %-ը, նախապատվությունը տալիս է Արփինե Հովհաննիսյանի, 5 %-ը՝ Զարուհի Փոստանջյանի, 4 %-ը՝ Հրանուշ Հակոբյանի, 2.6 %-ը՝ Շուշան Պետրոսյանի իմիջին: Հարցվածների 8.4 %-ի կարծիքով նշվածներից և ոչ մեկի իմիջը դրական չէ: Հարցվածների 5 %-ը (69 հոգի) Արփինե Հովհաննիսյանի խոսքը համարում է առավել կիրթ:

Անդրադառնալով կին գործիչների վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման համապատասխանելիության հարցին՝ պետք է նշել, որ ըստ մարդկանց 33 %-ի՝ Արփինե Հովհաննիսյանի վերբալ խոսքը համապատասխանում է ոչ վերբալին (ըստ 22.3 %-ի՝ Զարուհի Փոստանջյանի, 8.6 %-ի՝ Հրանուշ Հակոբյանի, 2 %-ի՝ Շուշան Պետրոսյանի): 34.1 %-ի, այն է՝ մեծամասնության կարծիքով նշվածներից ոչ մեկը չի կարողանում ճիշտ համադրել վերբալ և ոչ վերբալ խոսքը:

Ինչպես բխում է մեր կատարած հետազոտության արդյունքներից՝ քաղաքական նշված գործիչներից ամենահաջողը Արփինե Հովհաննիսյանն է, ով կարողանում հետևել իր թե՛ իմիջին, թե՛ վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման համապատասխանելիությանը: Ավելին՝ հա հետևում է նաև ընդհանուր կեցվածքին, ինչն ապահովում է

նրա՝ որպես քաղաքական գործչի ազդեցիկ ինքնաներկայացումը: Սա նշանակում է, որ անկախ իմիջմեյքերների աշխատանքից, Արփինե Հովհաննիսյանն անհրաժեշտ գիտելիքներ ունի քաղաքական գործչին հարիր կեցվածք դրսևորելու համար. կարողանում է զսպել ժեստերն ու դիմախաղը՝ ձևավորելով լուրջ կերպար: Ինչ վերաբերում է Շուշան Պետրոսյանին, հարկ է նշել, որ հանրության վերաբերմունքը վերջինիս հանդեպ որպես երգչուհի առավել դրական էր, քան որպես քաղաքական գործիչ, քանի որ նա չունի ո՛չ քաղաքական գործչին հարիր իմիջային կեցվածք, և ո՛չ էլ քաղաքական ոլորտի բավարար գիտելիքներ: Այդ է պատճառը, որ հանրության վերաբերմունքը չափազանց է բացասական է Շուշան Պետրոսյան-քաղաքական գործչի նկատմամբ:

Տվյալ գիտությունն, իրավամբ, իր ուրույն տեղն ունի քաղաքական դաշտում, մասնավորապես՝ ինքնաներկայացման մեջ: Քաղաքական գործիչները հսկայական գումարներ են ծախսում իմիջմեյքերներից ճիշտ խորհուրդներ ստանալու և ազդեցիկ կերպար ունենալու համար: Արփինե Հովհաննիսյանի, Զարուհի Փոստանջյանի, Շուշան Պետրոսյանի և Հրանուշ Հակոբյանի ուսումնասիրությամբ ծանոթացանք չորս տարբեր իմիջների, տարբեր տեսակների, որոնցից յուրաքանչյուրն ազդեցիկ է յուրովի, ասել է թե՛ «Մարդուն հագուստով ընդունում են, խելքով՝ բաց թողնում»: Մարդիկ զրուցակցին սկսում են գնահատել նախքան նրա խոսելը, ուստի, հեշտությամբ կարելի է շահել զրուցակցի վստահությունը՝ յուրացնելով ոչ վերբալ այն միջոցները, որոնք մեր մասին կարող են պատմել միայն դրականը: Մենք փորձեցինք անդրադառնալ այն ժեստերին, որոնք առավել լայն տարածում ունեն և որոնք մասնագետները կարողացել են վերծանել, համընդհանուր այն նշանների մասին, որոնք մեր ընտրած քաղաքական գործիչներն օգտագործել են իրենց էմոցիաներն ու հույզերն արտահայտելու համար: Բազմաթիվ ժեստեր մնացել են «կուլիսների հետևում»: Պատճառն այն է, որ անգամ մեծ ցանկության դեպքում չենք կարող ուսումնասիրել ոչ վերբալ հաղորդակցության բոլոր դետալներն ու մանրուքները՝ ամփոփելով մեկ հոդվածում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Дарвин Ч.**, О выражении эмоций, из-во Питер, Санкт Петербург, Москва, Харьков, Минск, 2001, с. 38.
- [2] **Сергеева О.**, Язык жестов, 49 простых правил, Москва, 2008, с. 40, 19, 7, 11, 16, 23, 45, 41.
- [3] **Пиз А., Пиз, Б.**, Язык телодвижений на работе, из-во ЭКСМО, Москва, 2014, с. 108, 100.
- [4] «Լսի, այ լակոտ, աչքերդ կհանեմ». Շուշան Պետրոսյան, 11.06.2016, 13:51, URL: <http://armtimes.com/hy/article/77285> (հղումը կատարվել է՝ 25.09.2018).

Օսիպյան Լիլիանա

**ՀԱՅ ԿԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՎԵՐԲԱԼ ԵՎ ՈՉ ՎԵՐԲԱԼ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ**

Բանալի բառեր՝ ոչ վերբալ իմիջ, վերբալ իմիջ, կինետիկ իմիջ, ժեստեր, քաղաքական գործիչ:

Քաղաքական դաշտում իր ուրույն ու կարևորագույն դերն ունի PR-ը, որի կարևոր բաղկացուցիչ են համարվում ինչպես վերբալ, այնպես էլ՝ ոչ վերբալ հաղորդակցումը, ուստի, սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ կին քաղաքական գործիչների վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման համապատասխանելիությունը, իմիջը և վարքը: Հետազոտության վերջնարդյունքը քաղաքական գործիչներին կօգնի տիրապետել ոչ վերբալ հաղորդակցման հմտություններին՝ մեծացնելով նրանց ծավալած քաղաքական գործունեության ազդեցիկությունն ու ինքնաներկայացման արդյունավետությունը:

Осипян Лилиана

**ВЕРБАЛЬНАЯ И НЕВЕРБАЛЬНАЯ КОММУНИКАЦИЯ АРМЯНСКИХ ПОЛИТИКОВ-
ЖЕНЩИН В АРМЯНСКИХ СМИ**

Ключевые слова: невербальный имидж, вербальный имидж, кинетический имидж, жесты, политический деятель.

На политической арене пиар играет уникальную и важную роль. Частью пиара является как вербальная, так и невербальная коммуникация, и именно поэтому целью данной работы является изучение соответствия имиджа, поведения, а также вербального и невербального общения среди армянских женщин-политиков. Конечный результат опроса поможет политикам овладеть навыками невербальными общения, что повысит эффективность их политической деятельности и эффективность самопрезентации.

**VERBAL AND NON-VERBAL COMMUNICATION OF ARMENIAN WOMEN-
POLITICIANS IN ARMENIAN MASS MEDIA**

Key words: non-verbal image, verbal image, kinetic image, gestures, politician.

In the political arena, PR plays a unique and important role. Both verbal and non-verbal communication are part of PR, consequently, the aim of this work is to study the correspondence of image, behaviour, as well as verbal and non-verbal communication among Armenian women-politicians. The results of the survey will help politicians master non-verbal communication skills, which will increase the effectiveness of their political activities and self-presentation.